Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՅԵՎ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՆԱՐԱՆՆ Ե

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

# ԾՐԱԳԻՐ

## ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академия Наук СССР

355.45
Ք-16

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1932

Թարգ Պ. ԱԹՈՅԱՆ Սրբագրեց՝ Պ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ ԳԼԱՎԼԻՏ (Բ) 7526 ՀՐ. № 2257 ՊԱՏՎԵՐ № 2118 ՏԻՐԱԺ 3000

Արտադր.—հանձ. 19 VI ստ. Ֆ. A
Ստորագրված է տպագրելու 27 VI

355.45
Ք-16
1 MAR 2010
VA 331

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ.

Ծրագրի ուսումնական պլանն ընդգրկում է վեց թեմա, «ընթացիկ քաղաքականություն» թեման ներառյալ, 12 ժամ ընդհանուր քանակով: Ծրագիրն ընդգրկում է յերեք խմբակ հարցեր:

I թեմայի հարցերի առաջին խմբակն է. 1. ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստությունը և Կարմիր բանակի խնդիրները. 2. Կարմիր բանակը պրոլետարական դիկտատուրայի զենքն է:

Հարցերի այս խմբակը նպատակ ունի մոբիլիզացիայի յենթարկել նախակոչիկների ուշադրությունը ԽՍՀՄ դեմ պատերազմի վտանգի հարցի ու յերկրի պաշտպանունակության ու բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի ամրապնդման խնդիրների շուրջը և սպառազինել նախակոչիկներին՝ Կարմիր բանակի դասակարգային եյության, պրոլետարական դիկտատուրայի և Համ Կ (բ) Կ ղեկավար դերի լենինյան, բոլշևիկյան հասկացողությամբ:

II. Հարցերի յերկրորդ խմբակին վերաբերում է 3-րդ թեման: —ԽՍՀՄ զինված ուժերի կառուցվածքի հիմունքները: Կարմիր բանակի կարգապահությունը:

Հարցերի այս խմբակը նպատակ ունի նախակոչիկներին ծանոթացնելու կուսակցության և բանակային ղեկավարության հիմնական դրույթներին՝ սոցիալիստական շինարարության ժամանակակից ետապում Կարմիր բանակի կառուցվածքի բնագավառում և Կարմիր բանակի ներքին կառուցվածքի կազմակերպության հարցերին՝ ժամանակակից մարտի բնույթի և Կարմիր բանակի տեխնիկապես հագեցման կողմից առաջադրվող նոր պահանջների լույսի տակ:

III. Հարցերի յերրորդ խմբակին վերաբերում է 4-րդ թեման: — Մեր արևմտյան հարևանները:

Այս թեման նպատակ ունի նախակոչիկներին ծանոթացնելու սահմանամերձ պետությունների ու նրանց դերի հետ՝ ԽՍՀՄ դեմ նոր պատերազմ ու ինտերվենցիա կազմակերպելու և պատրաստելու գործում:

IV. Հարցերի չորրորդ խմբակին վերաբերում են հետևյալ թեմաները.— 5. Պաշտպանության աշխատանքը ձեռնարկություններում և կոլտնտեսություններում: 6. Ընթացիկ քաղաքականության հարցերը:

Հարցերի այս խմբակը նպատակ ունի՝ նախակոչիկներին նախապատրաստել ձեռնարկություններում ու կոլտնտեսություններում Պաշ-Ա-

29 AUG 2013

41.804



վիաքնիմյան ակտիվ աշխատանք տանելու համար և հավաքի վերջին մանրամասն պարզաբանում տալ ԽՍՀՄ միջազգային և ներքին դրության մասին։

Քաղպարապմունքների ամբողջ ծրագիրը կառուցված է կարմիր բանակայինների ուսուցման 1-ին տարվա համար ԲԳԿԲ Քաղվարչության ծրագրի հիման վրա։

## ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԻԿԱՆ.

Այն նորմաները, վորոնց համար պետք է պայքարել, հետևյալներն են. ա) չպետք է լինի վոչ մի նախակոչիկ, վորը բավարար չափով յուրացրած չլինի քաղաքական պարապմունքների ծրագիրը. բ) բոլոր կոմունիստները, կոմյերիտականները, հարվածայինները պետք է աշխատեն քաղպարապմունքների ընթացքում ստանալ «լավ» գնահատականը։

Այդ դեպքում պետք է նկատի ունենալ, վոր յուրացումը կարող է համարվել բավարար, ևս առավել լավ միայն այն դեպքում, յեթե նախակոչիկն իմանում է վոչ միայն ընդհանուր քաղաքական դրույթյուններն ու հարցադրումները, այլ և սպառազինված է կոնկրետ փաստական նյութի գոնե ամենափոքր ծավալով, վորն անհրաժեշտ է այդ դրվածքները հիմնավորելու և ապացուցելու համար։

Յեթե ձեռքի տակ կարմիր բանակայինների ուսուցման առաջին տարվա դասագիրք կա (Ռազմհրատի հրատարակությունը), վորն ընդգրկում է քաղպարապմունքների սույն ծրագրի համարյա թե բոլոր հարցերը, անհրաժեշտ է աշխատել, վոր քաղպարապմունքների համար նախակոչիկների ինքնապատրաստությունը դրված լինի պատշաճ բարձրության վրա։

Քաղաքական պարապմունքների հիմնական մեթոդը հանդիսանում է կենդանի զրույցը, վորը ծավալված պիտի լինի քաղպարապմունքների համար նախակոչիկների նախնական պատրաստության հիման վրա։ Քաղպարապմունքներին հատկացված ամբողջ ժամանակն օգտագործվում է քաղղեկի կողմից իր խմբակի հետ կենդանի զրույց տանելու համար։ Քաղպարապմունքների յերկու ժամից առնվազն 15 րոպե օգտագործվում է հետևյալ պարապմունքի թեմայի վերաբերյալ ներածական զրույցի համար (հերթական թեմայի հիմնական հարցերի բացատրությունը, ինքնապատրաստության համար գրականություն ցույց տալը դասագրքում և լրագրում և այլն)։

Քաղպարապմունքների ժամանակ հիմնական հետևությունների գրանցումը նախակոչիկների կողմից պարտադիր է։ Պետք է պահանջել, վոր նախակոչիկը գրի հետևությունները վոչ թե թելադրանքով, այլ ձևակերպի ինքնուրույն կերպով քաղղեկի և ավելի զարգացած նախակոչիկների օգնությամբ։ Կենդանի զրույցի պրոցեսում պետք է, ըստ

ՊԵՏ. ԱՆ. ԳՐԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

58913-67



հնարավորին, օգտագործել քաղդասագիրք (առանձին քաղվածքներ, մեջբերումներ, հատկապես պարզ նյութեր)։

Քաղղեկը պարտավոր է սիստեմատիկորեն հաշվառում կատարել իր խմբակի յուրաքանչյուր նախակոչիկի յուրացման մասին։ Դրա համար քաղղեկը պետք է հատուկ մատյան ունենա ու կանոնավոր կերպով նրա մեջ գրանցի իր բոլոր դիտողությունները առանձին նախակոչիկների յուրացման մասին։ Յուրաքանչյուր թեմայի մշակումը վերջացնելուց հետո, քաղղեկը հայտնում է խմբակին իր գնահատականը յուրաքանչյուր առանձին նախակոչիկի յուրացման մասին, իսկ ծրագիրը վերջացնելուց հետո հանրագումար է տալիս ամբողջ ծրագրի մշակման մասին, յուրաքանչյուր նախակոչիկին ցույց տալով, թե նա յուրացման վերաբերյալ ինչ բացեր ունի, և կոնկրետ ցուցումներ տալով, թե նա վոր հարցերի վրա պետք է լրացուցիչ կերպով աշխատանք թափի։

Քաղղեկի ամենակարևոր պարտականությունն է՝ կազմակերպել աշխատանքը յետ մնացող նախակոչիկների հետ։ Յեթե կարիք լինի, յետ մնացող նախակոչիկների ինքնապատրաստման համար պետք է ամրացնել ավելի ուժեղ կուսակցական ու կոմյերիտական նախակոչիկներին։ Այդ դեպքում պետք է նկատի ունենալ, վոր այս տարի «Կարմիր բանակային» այբբենարանի ու ընթերցման համար առաջին գիրքը կազմված է քաղպարապմունքների ծրագրի համեմատ և կարող են օգտագործվել նախակոչիկների այդ խմբակի համար։

Քաղաքական պարապմունքների լավ վորակի գրավականն է՝ սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության լայն ծավալումը։ Քաղաքական պարապմունքների շուրջը ծավալվող սոցիալիստական մրցակցության հիմնական խնդիրն է՝ մոբիլիզացիայի յենթարկել նախակոչիկների մասսաները քաղպարապմունքների ծրագրի բարձրորակ յուրացման օգտին պայքար մղելու համար։ Սոցիալիստական մրցակցությունը պետք է ուղղված լինի նախակոչիկի քաղաքական պատրաստության ընթացքում հայտաբերված առանձին բացերը վերացնելու համար։

Պետք է աշխատել ամենամեծ չափով կոնկրետացնել քաղպարապմունքների շուրջը սոցմրցակցության պայմանագրերը։ Պայմանագրերի հիմնական օբյեկտներն են՝ թեմաների ժամանակին մշակումը, ինքնապատրաստման կազմակերպումը, յետ մնացողների հետ աշխատանքի կազմակերպումը, լրագրով սիստեմատիկորեն աշխատելը և այլն։ Նախակոչիկների յուրացման ստուգման ամբողջ աշխատանքը միևնույն ժամանակ պետք է սոցմրցակցության պայմանագրերի կատարման ստուգումը հանդիսանա։

Սոցմրցակցության կազմակերպիչն ու ղեկավարը հանդիսանում է խմբակավարը։

Կուսակցականների ու կոմյերիտականների օրինակելիությունը և բարձրաստիճան ակտիվությունը գրավական է հանդիսանում սոցմր-

ցակցության լայն ծավալման և նախակոչիկների մասսաների լայն մոբիլիզացիայի՝ պայքար մղելու քաղպարապմունքների բարձրորակ յուրացման համար:

Նախակոչիկների հետ քաղպարապմունքներն անցկացնելու համար բոլոր նշանակված քաղղեկների և խմբակավարների համար, վորպես կանոն, պետք է նախապես սեմինար կազմակերպել ու անցկացնել ծրագրի ուսումնական պլանի վերոհիշյալ թեմաների մասին: Սեմինարի ընթացքում պետք է մշակել ծրագրի հանգուցային հարցերը ու քաղպարապմունքներն անցկացնելու մեթոդիկան: Սեմինարի պարապմունքների մեթոդը հետևյալն է՝ նախ դրան մասնակցողների զեկուցումը, հետո այդ զեկուցումների բացատրությունն ու քննարկությունը և վերջում ղեկավարի յեզրափակման խոսքը:

Նախակոչիկների հետ քաղպարապմունքների ամբողջ ծրագիրն անցկացնելուց հետո, պետք է կազմակերպել նրանց յուրացման հանրագումարային ստուգում:

Սույն բացատրագիրը՝ քաղպարապմունքներն անցկացնելու մեթոդիկայի կազմակերպման մասում պարունակում է իր մեջ ԲԳԿԲ քաղվարչության 1931/32 ուսումնական տարվա ծրագրի մեջ յեղած ցուցումները:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

1. ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստությունը և Կարմիր բանակի խնդիրները . . . . . . . . . . . . . . . 2 ժամ.
2. Կարմիր բանակը պրոլետարական դիկտատուրայի զենքն է: Համ Կ (բ) Կ Կարմիր բանակի առաջնորդն է . . . . . 2 ժամ.
3. ԽՍՀՄ զինված ուժերի կառուցվածքի հիմունքները: Կարմիր բանակի կարգապահությունը . . . . . . . 2 ժամ.
4. Մեր արևմտյան հարևանները . . . . . . . . 2 ժամ.
5. Պաշտպանության աշխատանքը ձեռնարկություններում ու կոլտնտեսություններում . . . . . . . . . . . 2 ժամ.
6. Ընթացիկ քաղաքականության հարցերը . . . . . 2 ժամ.

Ընդամենը—12 ժամ.

## ԾՐԱԳԻՐ

## ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

### I. ԽՍՀՄ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Խորհրդային Միությունը և կապիտալիստական յերկրները: Կապիտալիզմի համընդհանուր ճգնաժամը և սոցիալիզմի շրջանը թևակոխած ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսության հսկայական տնտեսական վերելքն ու աճումը:



տական վերելքն ու աճումը: 1931 թվին ԽՍՀՄ-ում սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը: Գյուղատնտեսության մեջ սոցիալիզմի հսկայական հաջողությունները՝ Հոկտեմբերյան հեղափոխության XIV տարեդարձին 60% կոլեկտիվացրած տնտեսություններ համատարած կոլեկտիվացման բազայի վրա: Ավարտվում է կուլակության, վորպես դասակարգի վերացումը ԽՍՀՄ-ի հացահատիկային և հումքային ռայոններում: Դասակարգային ուժերի փոխհարաբերության տեսակետից սոցիալիզմի հաղթանակման հարցը վճռված է անդառնալիորեն:

«Մեզ մոտ ԽՍՀՄ-ում —սոցիալիստական շինարարության աճող վերելքն է՝ թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության մեջ: Նրանց, կապիտալիստների մոտ— էկոնոմիկայի աճող ճգնաժամն է՝ թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության մեջ». (Ստալին):

Կապիտալիզմի համաշխարհային ճգնաժամի նոր էտապը: Սոցիալֆաշիզմը «հիվանդ կապիտալիզմի բժշկի» դերում, աճող հեղափոխական վերելքի դեմ վոստիկանների դերում: Նոր հեղափոխական վերելքը և բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև հակասությունների հսկայական սրումն ամբողջ աշխարհում: Հակասությունների սրումը իմպերիալիստների և գաղութային ու կիսագաղութային յերկրների միջև՝ Հնդկաստանի և Անգլիայի միջև, Հնդկաչինի և Ֆրանսիայի միջև, Չինաստանի և բոլոր իմպերիալիստների միջև, Հարավային Մանջուրիայի գրավումը Ճապոնիայի կողմից և ճապոնական զորքերի առաջխաղացումը դեպի կենտրոնական Չինաստանը: Հակասությունների սրումը Ճապոնիայի և ՀԱՄ Միացյալ նահանգների միջև: ԽՍՀՄ-ի և փթող կապիտալիզմի միջև հակասությունների խիստ սրումը:

ԽՍՀՄ-ի դեմ ռազմական վտանգի աճումը և իմպերիալիստների կողմից նոր պատերազմի ու ինտերվենցիայի պատրաստությունը:

2. ԽՍՀՄ-ի խաղաղ քաղաքականությունը և կապիտալիստների իմպերիալիստական քաղաքականությունը, վորոնք ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ ու ինտերվենցիա յեն պատրաստում: ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը՝ խաղաղության քաղաքականություն է: ԽՍՀՄ-ի ձգտումն ամենամոտիկ հարևանների հետ խաղաղ փոխհարաբերություններ սահմանելու: ԽՍՀՄ առաջարկությունը զինաթափման մասին և կապիտալիստների վերաբերմունքը դեպի այդ առաջարկությունը: ԽՍՀՄ-ի ձգտումը մյուս յերկրների հետ առևտրական կապեր սահմանելու և ամրապնդելու:

ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիայի վտանգի աճումը համաշխարհային ճգնաժամի կապակցությամբ և կապիտալիստների ձգտումն իրենց հակասությունները լուծելու ԽՍՀՄ-ի հաշվին: ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պատրաստության ուժեղացումը: Տնտեսական շրջափակումը (բլոկադան): Չինարևելյան յերկաթուղու վրա հարձակումը, վորպես ինտերվենցիայի փորձ ԽՍՀՄ-ի դեմ: 1930 թվին ինտերվենցիայի իրականաց-

ման փորձը: «Արդկուսակցության» և «մենշևիկների» դատավարության պրոցեսները և դրանց նշանակությունը: 1931 թ. ինտերվենցիայի պլանների իրագործման անհաջողության պատճառները (հակասությունների աճումը իմպերիալիստների միջև, կապիտալիստական յերկրներում հեղափոխական շարժման աճումը, և կոմինտերնի աշխատանքը, ԽՍՀՄ-ի տնտեսական հզորության և պաշտպանունակության ամրապնդումը, խաղաղության մեր քաղաքականությունը): Ռազմական վտանգը շարունակում է ծվալվել:

3. ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի քաղաքական պատրաստությունը: Լեհաստանի, Ռումինիայի, Մերձբալթյան պետությունների և այլ՝ խոշորագույն կապիտալիստական յերկրների ագենտության տակ ընկնելը: Ռազմա-քաղաքական միությունների և համաձայնությունների կնքումը: Յերկրի և բնակչության միլիտարիզացիայի մասին օրենքը՝ (Պոլ-Բոնկուրի օրենքը և լայն): ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի համար հասարակական կարծիքի պատրաստությունը: «Խաչակրաց արշավանք»: «Դեմպինգի կամպանիան», «Հարկադրական աշխատանքի» մասին առասպելը և դրանց նշանակությունը:

Զինված ուժերի պատրաստությունը: Ռազմական ծախքերի աճումը: Ռազմական արդյունաբերության զարգացումը՝ ընդհանուր տնտեսական ճգնաժամի հետ միասին, կռվի տեխնիկական միջոցների աճումը:

Թիկունքի պատրաստությունն ու ապահովումը առաջիկա պատերազմի համար: Պայքարը կոմունիստական շարժման դեմ: Յերկրորդ Ինտերնացիոնալը, վորպես կապիտալիստական բուրժուազիայի կարևորագույն զենքը ԽՍՀՄ-ի դեմ պաշարման և հակահեղափոխական պատերազմի իդեոլոգիական ու քաղաքական պատրաստության գործում (ԿԻԳԿ XI պլենումը): «Ձախ» սոցիալ-դեմոկրատների դերը: Տրոցկիստներն ու աջերը բուրժուազիայի ագենտներն են ինտերվենցիայի պատրաստության գործում:

4. ԽՍՀՄ համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադն է: ԽՍՀՄ-ի դեմ ռազմական ինտերվենցիայի վտանգը անմիջական վտանգ է դարձել համաշխարհային ամբողջ պրոլետարիատի համար (ԿԻԳԿ XI պլենումը):

Թշնամիների յերկրում մեր դաշնակիցներն են՝ բոլոր յերկրների բանվոր դասակարգը, աշխատավորները և կեղեքվածները:

«Մեր քաղաքականությունը՝ բոլոր յերկրների հետ խաղաղության և առևտրական կապերի ուժեղացման քաղաքականությունն է: Այդ քաղաքականությունը մենք կվարենք նաև ապագայում մեր բոլոր ուժերով, բոլոր միջոցներով: Ուրիշի հողից մենք վոչ մի թիզ չենք ցանկանում, բայց մեր հողից էլ վոչ մի վերշոկ վոչվոքի չենք զիջի. (Ստալին):

ԲԳԿԲ խորհրդային իշխանության խաղաղ քաղաքականության հե-



նարանն է: Յերկրի պաշտպանությունը և Կարմիր բանակի մարտական հզորությունն ամեն կերպ ամրապնդելու անհրաժեշտությունը: Նախակոչիկների խնդիրները ԽՍՀՄ-ի պաշտպանության գործում:

## II. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԶԵՆՔՆ Է.

Կարմիր բանակը «ազատված բանվորների և գյուղացիների բանակն է, Հոկտեմբերյան հեղափոխության բանակն է, պրոլետարիատի դիկտատուրայի զենքն է» (Ստալին): «Կարմիր բանակը պրոլետարական պետության զենքն է դասակարգային թշնամիներին ճնշելու համար: Կարմիր բանակը բանվոր դասակարգի զինված դաշինքն է բոլոր ազգությունների աշխատավոր գյուղացիության լայն մասսաների հետ»: «Բանվորների և գյուղացիների դաշինքը— Կարմիր բանակը— ամուր է, սերտ է և անքակտելի յե» (Լենին): Բանվոր դասակարգի և նրա կուսակցության ղեկավար դերը Կարմիր բանակում: Դասակարգայնորեն անհարազատ տարրերին թույլ չտալը Կարմիր բանակ մտնելու: Կարմիր բանակի պետկազմի սոցիալական-դասակարգային դեմքը: Կարմիր բանակը աշխատավորների ռազմական պատրաստության դպրոցն է: Կարմիր բանակը «առաջնակարգ քաղաքական դպրոց է» (Գամարնիկ): Կարմիր բանակի դերը սոցիալիստական շինարարության մեջ: Կարմիր բանակի կապը աշխատավորների հետ: «Ժողովուրդն ու բանակը մի ամբողջություն, մի ընտանիք են կազմում» (Ստալին): Կարմիր բանակի ինտերնացիոնալ-դասակարգային բնույթը: «Կարմիր բանակը ազգերի միջև յեղբայրության բանակն է, կեղեքված ազգությունների ազատագրման բանակն է, համաշխարհային հեղափոխության բանակն է, բոլոր յերկրների բանվորների բանակն է» (Ստալին): ՀամԿ(բ)Կ Կարմիր բանակի առաջնորդն է: Կարմիր բանակի՝ պրոլետարական դիկտատուրայի զենքի տարբերությունը բուրժուական բանակներից՝ վոր իմպերիալիզմի զենքն է ու աշխատավորների կեղեքման գործիքը:

## III. ԽՍՀՄ-Ի ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1. Կարմիր բանակի մարտական հզորության ամրապնդումը՝ սոցիալիստական շինարարության հսկայական հաղթանակների և Կարմիր բանակի հաստատուն բոլշևիկյան ղեկավարության հիման վրա: Ինդուստրացման և կոլեկտիվացման հաջողությունները, կոլտնտեսականներին գյուղատնտեսության կենտրոնական դեմք դարձնելը, նոր մարտիկի՝ բանվոր-հարվածայինի ու կոլտնտեսականի բանակ գալը և Կարմիր բանակի դասակարգայնորեն համախմբվածության ամրապնդումը: Կարմիր բանակի վերակառուցումը (տեխնիկական սարքավորումը) ԽՍՀՄ-ի ինդուստրացման հիման վրա: Տեխնիկային տիրապետելու խնդիրը, վորպես կարմիր բանակի շինարարության վճռողական խնդիր: Ընկ. Վորոշիլովը տեխնիկային տիրապետելու մասին:

2․ Յերկրային սիստեմը ԽՍՀՄ-ի զինված ուժերի կառուցվածքի հիմքն է: Կադրային և յերկրային զորամասերը: Սոցիալիստական արդյունաբերության, համատարած կոլեկտիվացման աճման նշանակությունը յերկրային կառուցվածքի համար: Լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների իրականացումը ԲԳԿԲ-ի կառուցվածքում: Ազգային զորամասերը: Ընդհանուր պարտադիր զինվորական ծառայությունը: Կարմիր բանակի համալրման սիստեմը, գործոն զինվորական ծառայությունը, պահեստում լինելը, արտազորական պատրաստությունը: Աշխատավորների ռազմական պատրաստությունը:

3․ ԽՍՀՄ-ի զինված ուժերի կազմը, ԲԳԿԲ-ի կազմակերպությունը՝ ժամանակակից մարտի բնույթի կողմից առաջադրվող պահանջների և կարմիր բանակի տեխնիկական հագեցման կապակցությամբ: Զորքերի տեսակները, նրանց նշանակումը, նրանց համագործակցությունը: Հետևակը, վորպես զորքերի հիմնական տեսակը: Հեծելազորը, հրետանին, զրահուժերը, տանկերը, քիմիական զորքերը, կապի զորքերը, օդային տորմիղը, ծովային նավատորմը և նրանց համագործակցությունը հետևակի հետ:

Կարմիր բանակի ղեկավարման կենտրոնացումը: Յերկաթե հեղափոխական կարգապահությունը Կարմիր բանակի մարտական հզորության գրավականն է: ԲԳԿԲ-ի կարգապահության դասակարգային եյությունը, դրա տարբերությունը բուրժուական բանակների կարգապահությունից: Լենինը Կարմիր բանակի կարգապահության մասին․ «ով ամբողջովին և անկեղծորեն չի օգնում Կարմիր բանակին, ամբողջ ուժերով չի պահպանում Կարմիր բանակի կարգն ու կարգապահությունը, նա դավաճան է և մատնիչ է»: Կարգապահության նշանակությունը մարտական պարագայում: Կարգապահության նշանակության մասին օրինակներ քաղաքացիական պատերազմի փորձից․ «Յեթե մտածենք, թե ինչ եր վերջիվերջո ընկած այն բանի խորը հիմքում, վոր այդպիսի պատմական հրաշք տեղի ունեցավ, վոր թույլ, ուժասպառ, հետամնաց յերկիրը հաղթեց աշխարհիս ամենաուժեղ յերկրներին, ապա մենք տեսնում ենք, վոր դա կենտրոնացումն է, կարգապահությունը և չլսված անձնազոհությունը (Լենին): Կարգապահության նշանակությունը խաղաղ ժամանակում: Կարգապահությունը և տեխնիկային տիրապետելը: Ինչու ԲԳԿԲ նոր տեխնիկայով հագեցումը և դրան տիրապետելու խնդիրները պահանջում են ամեն կերպ ամրապնդելու ԲԳԿԲ կարգապահությունը:

Հրամատարի իրավունքներն ու պարտականությունները՝ զորամասում կարգապահության ամրապնդելու գործում: Պայքար առանց կարգապահական միջոցների զորամասի համար: Կարգապահական պրակտիկան, խրախուսանքները, պարգևատրությունները:

ԲԳԿԲ զորամասերին ու մարտիկներին առաջադրվող պահանջները՝ մարտիկների ամուր դասակարգային համախմբվածություն, բարձր քաղաքական գիտակցություն, մարտական տեխնիկային կատարելապես տի-



րապետում, ընկերական փոխօգնություն և փոխադարձ հարգանք, մարտական դժվարությունները, յերթական կյանքը հաղթահարելու ունակություն և կարգապահ լինելը: Կարմիր բանակայինի պարտականությունները ռազմական գաղտնապահության վերաբերմամբ: Ինքնաքննադատությունը Կարմիր բանակում, վորպես զենք ԲԳԿԲ մարտունակության ամրապնդելու համար: Ինքնաքննադատության կիրառման առանձնահատկությունները Կարմիր բանակում:

5․ Կարմիր բանակայինների իրավունքներն ու պարտականությունները: Կարմիր բանակայիններն և պետկազմը: Հրամատարն իր զորամասի վճռական, հաստատակամ, համարձակ մարտական ղեկավարն է (բջիջների քարտուղարների 3-րդ խորհրդակցություն): Պետկազմի դերը զորամասի մարտական ու քաղաքական պատրաստությունը ղեկավարելու և կարգապահությունն ամրապնդելու գործում: Միահրամատարությունը (միանձնյա ղեկավարությունը) Կարմիր բանակում: Քաղղեկները, վաշտի հրամատարի քաղօգնականը, կոմիսարները, գնդի հրամատարի քաղօգնականը: Շտաբներն ու վարչությունները: Քաղաքական օրգանները: Ռազմական տրիբունալն ու դատախազությունը: ԽՍՀՄ-ի Հեղափոխական ռազմական խորհուրդը: ԲԳԿԲ Քաղվարչությունը: Կուսակցությունը, նրա կենտկոմը և Կարմիր բանակը: Կարմիր բանակի առաջնորդ ընկ․ Վորոշիլովը, վոր հետևողականորեն անց է կացնում կուսակցության և կենտկոմի գիծը: Ընկ․ Վորոշիլովի կենսագրությունը: Ընկ․ Գամարնիկը՝ ԲԳԿԲ քաղվարչության պետ և ԽՍՀՄ-ի Հեղափոխական Ռազմական խորհրդի նախագահի տեղակալ: Ընկ․ Գամարնիկի կենսագրությունը:

## IV․ ՄԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

1․ Սահմանամերձ պետությունների դերը ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պատրաստության գործում: Լիմիտրոֆների (սահմանամերձ պետությունների) հանդես գալու պատմությունը: Ցարիզմի քաղաքականությունը: Համաշխարհային պատերազմը: Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման լոզունգը:

Լեհաստանը, Ռումինիան, Մերձ-Բալթյան պետությունները քաղաքացիական պատերազմի շրջանում: Լեհ-խորհրդային պատերազմը: Լեհաստանի կողմից Արևմտյան Ուկրայնայի և Բելոռուսիայի հափշտակման պատմությունը և Բեսարաբիայի հափշտակումը Ռումինիայի կողմից: Կարելյան ավանտյուրան:

2․ Լեհաստան: Լեհաստանը, վորպես իմպերիալիզմի գլխավոր ագենտ արևմտյան սահմանամերձ պետությունների հակախորհրդային ֆրոնտ ստեղծելու գործում:

Լեհաստանի դրությունը՝ 1926 թվի մայիսի Պիլսուդսկու հեղաշրջումից հետո․ Լեհական պետության ֆաշիստական բնույթը, զինվորական կլիկի գերիշխանությունը: 1926—1927 թ․ թ․ լեհական ֆաշիզմի ստաբիլիզացիոն հաջողությունների փքածությունը, խախուտությունը և կարճատևությունը:

Տնտեսական ճգնաժամի բնութագիրը Լեհաստանում։ Ռազմական արդյունաբերության զարգացումը, արդյունաբերության հին ճյուղերի անկումը, ագրարային ճգնաժամը, ֆեոդալիզմի մնացորդները, ռազմական ծախքերի հսկայական աճումը, արտաքին վաճառահանման շուկաների բացակայությունը, կապիտալների պակասը։

Հեղափոխական շարժման աճումը քաղաքում և գյուղում։ Ազգային փոքրամասնությունների կեղեքումը և ազգային ազատագրական շարժումը Արևմտյան Ուկրայինայում ու Բելոռուսիայում։ Հեղափոխական ճգնաժամի նախադրյալների աճումը Լեհաստանում։ Լեհաստանի կոմկուսակցության դերը։

Լեհական ֆաշիզմի իմպերիալիստական պլանները։ Զինված ուժերը և ռազմաֆաշիստական կազմակերպությունները։ Լեհական բանակը և նրա դասակարգային բնույթը։

3. Ռումինիա։ Ընդհանուր բնութագիրը։ Ռումինական բուրժուազիայի քաղաքական ձգտումները։ Բեսարաբիայի հափշտակումն ու կեղեքումը Ռումինիայի կողմից։ Ագրարային և արդյունաբերական ճգնաժամը։ Ագրարային ռեֆորմի կուլակային բնույթը։ Ազգային հարցը Ռումինիայում։ Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և մյուս խոշոր իմպերիալիստական յերկրների ազդեցությունը Ռումինիայի եկոնոմիկայի և քաղաքականության վրա։ Նացիոնալ—ցարանիստների իշխանության գլուխն անցնելը։ Հեղափոխական շարժումը Ռումինիայում։ Ուժեղ ֆաշիզացումը։ Կարոլի գահը վերադառնալու նշանակությունը։ ԽՍՀՄ—ի դեմ պատերազմի պատրաստությունը։ Ռումինիայի կոմկուսակցությունը և նրա խնդիրները։ Ռումինական բանակը և նրա դասակարգային եյությունը։

4. Մերձբալթյան պետությունները։ Ֆինլանդիայի, Եստոնիայի, Լատվիայի և Լիտվայի համառոտ ընդհանուր բնութագրությունը։ Այդ յերկրների պետական անկախությունը Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով։ Այդ յերկրների բուրժուազիայի պայքարը հեղափոխական շարժման դեմ։ «Ագրարային ռեֆորմի» բնույթը։ Տնտեսական ճգնաժամի բնույթը այդ յերկրներում։ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Լեհաստանի ազդեցությունը Մերձ-բալթյան պետությունների քաղաքականության վրա, վորն ուղղված ե ԽՍՀՄ—ի դեմ։ Լեհաստանի ձգտումը այդ յերկրների հեգեմոնիան ձեռք բերելու, նրա ձգտումը Լիտվան հափշտակելու, ԽՍՀՄ—ի դեմ իր դիրքերն ուժեղացնելու համար։ Խաղաղության մեր քաղաքականությունը։ Առևտրական և դիվանագիտական հարաբերությունները ԽՍՀՄ—ի և Մերձբալթյան յերկրների միջև։ Ֆինլանդական բուրժուազիայի պրովակացիոն քաղաքականությունը ԽՍՀՄ—ի վերաբերմամբ։ Ֆրանսիայի և Անգլիայի դերը Մրձբալթյան յերկրներում ԽՍՀՄ դեմ պատերազմի բազայի պատրաստության գործում։ Մերձբալթյան յերկրների կոմկուսակցությունները



և նրանց խնդիրները։ Մերձբալթյան պետությունների բանակների բնութագրությունը։

## V. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Յուրաքանչյուր ֆաբրիկա, գործարան պաշտպանության ամրոցն ե։ Ինդուստրացումը յերկրի պաշտպանունակության հիմքն ե։ Հնգամյակը 4 տարում կատարելու և արտֆինպլանների համար մղվող պայքարը— պայքար ե պաշտպանության ամրապնդման համար։ Բանվոր դասակարգի դերը յերկրի պաշտպանությունն ամրապնդելու գործում։ Կուսկազմակերպությունը, կոմյերիտմիությունը, պրոֆկազմակերպությունները ձեռնարկություններում տարվող պաշտպանության աշխատանքում։ Տեխնիկայի համար արշավը կապել ռազմական տեխնիկայի ուսումնասիրության հետ։

Աշխատանքը ԲԴԿԲ մարտական հզորության ամրապնդման համար։ ԲԳԿԲ զորամասերի բանվորական շեֆությունը և նրա խնդիրները։ Զորակոչային կամպանիաները և ռազմական դպրոցների համար բանվորական յերիտասարդության հավաքագրումը՝ Կարմիր բանակի մարտական հզորության ամրապնդման ամենակարևոր ողակն ե։ Յերկրային կառուցվածքը և միջհավաքային աշխատանքի ծավալումը ձեռնարկության մեջ։

Բանվորների ռազմական պատրաստությունը. բանվորների ռազմական պատրաստության հիմնական խնդիրները։ Պաշտպանության վերաբերյալ ագիտ—մասսայական աշխատանքի լայն ծավալման խնդիրները։ Վարժական-շարային միավորների, վարժական կայանների, ռազմական խմբակների գործնական աշխատանքը։ Ռազմական անկյունը և վարժակայանը պաշտպանության աշխատանքի հենարանային բազան ե ձեռնարկություններում։ Պաշտպանության աշխատանքները ղեկավարներով և հրահանգիչներով ապահովումը։ Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը պաշտպանության աշխատանքի ծավալման հզոր լծակներն են։

Ձեռնարկությունների պրոլետարական հասարակայնությունը պաշտպանության աշխատանքում։ Կուսկազմակերպությունը պաշտպանության աշխատանքի ղեկավարն ու կազմակերպիչն ե։ Կոմյերիտականներին մարտական ուսուցումով մարդագլուխ ընդգրկելու խնդիրը։ Պաջը-ավիաքիմի, Ավտոդորի, Ռուսաստանի Կարմիր խաչի ընկերության, Ռադիոյի բարեկամների ընկերության կազմակերպությունների աշխատանքը։ Ֆաբրիկ-գործարանային մամուլը պաշտպանության աշխատանքի կազմակերպության ամենակարևոր զենքն ե։ Հանուն ձեռնարկությունների ռազմական աշխատանքի միասնական պլանի։

Նախակոչիկը ձեռնարկության մեջ պաշտպանության աշխատանքի

առաջավոր մարտիկն է: Նախակոչիկը Պաշը-Ավիաքիմի ակտիվիստն է: Ինչ պետք անի նախակոչիկը պաշտպանության աշխատանքի բնագավառում՝ ֆաբրիկայում և գործարանում:

2. Պաշտպանության աշխատանքը կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և մեքենա-տրակտորային կայաններում: Համատարած կոլեկտիվացումն ու կուլակության, վորպես դասակարգի վերացումը և այդ քաղաքականության նշանակությունը պաշտպանության աշխատանքի համար: Կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները և մեքենա-տրակտորային կայանները պաշտպանության աշխատանքի հենարանային բազաներն են: Ռայոնական խորհտնտեսությունները և մեքենա-տրակտորային կայանները—վորպես պաշտպանության աշխատանքի ավանգարդները գյուղում: Աշխատանքը մենատնտես սեկտորում:

Պաշը-Ավիաքիմի աշխատանքի հիմնական խնդիրները գյուղում: «Հնգամյակի վերջում առնվազն 10 միլիոն կոլտնտեսականներ Պաշը-Ավիաքիմի շարքերում» խնդիրը: Պաշը-Ավիաքիմի բջիջների կազմակերպության անհրաժեշտությունը յուրաքանչյուր կոլխոզում, սովխոզում ու մեքենա-տրակտորային կայանում: Պաշը-Ավիաքիմը գյուղի սոցիալիստական վերակառուցման և պաշտպանության ամրապնդման առաջին շարքերում պետք լինի: Պաշը-Ավիաքիմի ամբողջ աշխատանքի վերակառուցումը գյուղատնտեսության վերակառուցման խնդիրների համեմատ: Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը Պաշը-Ավիաքիմի աշխատանքում: Պաշը-Ավիաքիմի աշխատանքի կուսակցական ղեկավարությունը:

Պաշը-Ավիաքիմի խնդիրը Կարմիր բանակի մարտական հզորության ամրապնդման գործում: Կարմիր բանակի մարտական պատմությունը և նրա ընթացիկ վիճակի հարցերն ուսումնասիրելու խնդիրը: Աշխատավորների և Կարմիր բանակի կապի ամրապնդումը: Կարմիր բանակի ապահովումը գրագետ զորակոչիկներով: Ռազմական դպրոցների և ԲԳԿԲ շարքերի դասակարգային համալրման ապահովումը:

Ռուսաստանի Կարմիր Խաչի ընկերության, Ավտոդորի և մյուս կամավորական ընկերությունների պաշտպանության աշխատանքի կազմակերպությունը:

Միջհավաքային աշխատանքը: Միջհավաքային աշխատանքի հատուկ կարևորությունը: Միջհավաքային աշխատանքի սխեմը: Պաշը-Ավիաքիմի խնդիրները միջհավաքային աշխատանքի կազմակերպության գործում:

Մամուլը և պաշտպանությունը: Ռայոնական և սովխոզ-կոլխոզային մամուլը միջհավաքային աշխատանքի կազմակերպիչն է:

Նախակոչիկ— ինթիլթակերների խնդիրները:

ՊԵՏ. ԿԵՆ. ԳՐ. ԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍԽՌ-Арм ССР
Ա. Մ. Մյասնիկյանի անվան
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0219834

ԳԻՆԸ 15 Կ. (1 Ռ.)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

ПРОГАММА
По политготовке для до призывников
обуч. в орг. Осо--Авиохима